ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երիտասարդներ,

Այսօր տոնում ենք Երիտասարդության միջազգային օրը՝ իր անսպառ եռանդով, համարձակ երազանքներով, նոր գաղափարներով ու ապագայի հանդեպ հավատով: Դուք այն սերունդն եք, ում գիտելիքը, աշխատանքն ու նախաձեռնողականությունը ձևավորում են մեր համայնքի վաղվա օրը: Յուրաքանչյուր երիտասարդի հաջողություն, ձեռքբերում և իրականացված գաղափար մեր համայնքի զարգացման մի մասնիկն է: Մաղթում եմ, որ երբեք չվախենաք մեծ նպատակներ ունենալուց, հավատաք ձեր ուժերին և համարձակորեն ստեղծեք այն ապագան, որի մասին երազում եք: Թող ձեր ճանապարհը լի լինի նոր հնարավորություններով, հաջողություններով, գեղեցիկ ձեռքբերումներով և արժանի մարդկանցով: Սիրե՛ք, արարե՛ք, զարգացե՛ք և հավատացե՛ք ձեր ուժերին: Շնորհավոր Երիտասարդության միջազգային օրը: --